Հետազոտական աշխատանքի կառուցվածք

Տիտղոսաթերթ (1 էջ)

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Բույսերի թագավորություն,Դեղաբույսերի բուժիչ նշանակության իրազեկումը 11-րդ դասարանում:
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Մարիամ Մելսի Պողոսյան Կենսաբանության և քիմիայի ուսուցիչ 098649479 poghosyanm654@gmail.com Կենսաբանություն և Քիմիա 7-րդ.8-րդ.9-րդ.10-րդ.11-րդ.12-րդ

Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրինության) • Web կայքի հասցե	ՀՀ Լոռու մարզի Կուրթանի միջնակարգ դպրոց kurtan@school.am 095313985 kurtan.schoolsite.am

Բովանդակություն (1 էջ)

Հետազոտական աշխատանք՝Տիտղոսաթերթ.....1
Բովանդակություն.....2
Ներածություն.....3
Պարագրաֆներ/մասեր.....4
Դեղաբույսերի մասին..... 4
Դեղաբույսերի կարևորությունը.....4
Դեղաբույսերի հավաքման և մշակման եղանակները՝.....7
Դեղաբույսերի իրազեկում՝.....8
Հետազոտության ընթացքը,առաջացած խնդիրները՝.....9
Եզրակացություն.....13
Օգտագործված գրականության ցանկ.....14
Հավելվածներ.....15

Ներածություն (1-ից 2 էջ)

Նպատակը եւ հետազոտական հարցը	Նպատակը՝ սովորողների մոտ ձևավորել համատեղ աշխատելու, ժամանակի կառավարման,իրազեկման, սեփական և մյուսների ֆիզիկական և հոգեբանական հնարավորությունները գնահատելու և սոցիալականհմտություններ: Հարց՝Ինչպե՞ս իրազեկել դեղաբույսերի բուժիչ նշանակությունը կուրթանի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի կողմից
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Սովորողների մոտ ձևավորում են համակարգված և թիմային աշխատանք, նրանք ձեռք են բերում սովորել սովորելու կարողունակություն,մշակում են , և ներկայացնում են տեղեկություններ,հարգում են միմյանց կարծիքներ:
Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունն ուղղված է սովորել սովորելու կոմպետենցիային:
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Հիմնախնդրին անդրադարձ է կատարվել հիմնականում մասնագիտական թեմայի շրջանակում:

Պարագրաֆներ/մասեր (10-15 էջ)

Գրականության ակնարկ	Աշխատանքը աշակերտները բաժանում են մասերի՝

• Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	1.Հետազոտության հարցեր 2.Հետազոտության ռեսուրսներ 3.Հետազոտության գործողություններ 4.Պատասխանատուներ 5.Հետազոտության ընթացք 6.Արդյունքներ Յուրաքանչյուր փուլ իրականացվում է ըստ նախագծի ընթացքի:Ուսուցիչը այնուհետև ընտրում է ժամանակացույց և առաջնորդվում այդ ժամանակացույցով: Մինչ հետզոտությունը սկսելը,ուսուցիչը իր դասապրոցեսի ընթացքում աշակերտների հետ ուսումնասիրում է նյութը: Կարևորում նրանց բուժիչ նշանակությունը: **Դեղաբույսեր (լատիներեն՝ plantae medicinalis), մարդկանց և կենդանիների տարբեր հիվանդությունների բուժման, կանխարգելման և այլ դեղերի ստացման նպատակով օգտագործվող բույսեր: Թեև բույսերը մինչ օրս մնում են տարբեր ֆարմակոլոլգիական ակտիվություն ունեցող նյութերի ստացման աղբյուր, ներկայումս նոր դեղերի ստեղծումը կապված է ավելի շատ սինթետիկ օրգանական քիմիայի հետ**[1]:Բույսերը **մարդկային պատմության ընթացքում կիրառվել են տարբեր հիվանդությունների բուժման նպատակով: Մեր օրերում բուսաբուժությունը այլընտրանքային բժշկության մաս է համարվում:** **Բուսաբուժությունը տարբերվում է ժամանակակից բուսական ծագման դեղերից, քանի որ հիմնված է այն սխալ պակերացումների վրա, որ «բնական» ամբողջական բույսերը ավելի էֆեկտիվ և/կամ անվտանգ են քան բույսերից առանձնացված կամ սինթետիկ դեղերը**

Դեղաբույսերի բուժիչ հատկությունների մասին հայ մատենագրության մեջ առաջին գրավոր վկայությունն է թողել Եզնիկ Կողբացին, իսկ որպես դեղամիջոցներ օգտագործել են Մխիթար Հերացին և Ամիրդովլաթ Ամասիացին:

Տեսակներ[խմբագրել | խմբագրել կոդը]

Հայաստանի ֆլորայում տարածված դեղաբույսերը կարելի է խմբավորել մարդու օրգանիզմի վրա ունեցած ենթադրելի ներգործությամբ. սիրտանոթային համակարգի հիվանդությունների դեպքում գործածվող դեղաբույսերից են կուժկոտրուկը, ծխաբույսը, եղեսպակը, մատնոցուկը, գազը, նյարդային համակարգի հիվանդությունների դեպքում՝ շիկատակը, սև բանգին, կատվախոտը, դաղձը և այլն: Արյան բարձր ճնշումն իջեցնող միջոց են սխտորը, հովվամաղախը, մորենին, ընկուզենին և այլն: Միզամուղ հատկություն ունեն կուժկոտրուկը, կռատուկը, ճարճատուկը, դաշտային ձիաձետը, գիհին, եգիպտացորենը և այլն: Լեղամուղ են մասրենին, կանթեղախոտը, անթառամը, գաղձը և այլն: Ստամոքսի հիվանդությունների դեպքում օգտագործում են տուղտը, նշենին, հորթալեզուն, ոսկեհազարուկը, հոնը, մատուտակը, եզան լեզուն, խատուտիկը, շնչառական ուղիների հիվանդությունների դեպքում՝ տուղտը, խուլեղինջը, դաղձը, ուրցը, տատրակը և այլն: Քրտնաբեր հատկություններ ունեն ազնվամորին, թանթրվենին, լորենին և այլն: Ցավամոքիչ են ընձախոտը, շիկատակը, սև բանգին, կակաչը, արջընկույզը և այլն:

Այս նյութերը ուսումնասիրելիս ,աշակերտների մոտ առաջացավ հետաքրքրասիրություն ուսումնասիրել համայնքի դեղաբույսերը և նրանց բուժիչ

	հատկությունները: Հետազոտության առաջին քայլը եղավ հարցեր կազմելը. Այստեղ նշված են փոփոխությանը հասնելու վերաբերյալ հարցերը: Ի՞նչ է ձեզ անհանգստացնում/հետաքրքրում,որոնք միջոցով կգտնեք հետազոտության հարցի հետևում թաքնված պատճառները և հետագայում կկարողանաք լուծում սահմանել: Կարևոր է այս փուլում սկսել պատճառներ փնտրելուց, ինչու՞ այս կամ այն բանը այլ կեպ, ի՞նչ է պատճառը: Ստորև՝աշակերտների կողմից դուրս բերված հարցերը՝ • Ինչու՞համայնքի բնակիչները չեն օգտագործում տեղում աճող բույսերը: • Ձեր համայնքում կան մարդիկ,ովքեր ավելի լավ է ճանաչում տեղի բույսերը կամ զբաղվում են հավաքչությամբ • Ի՞նչ բույսեր եք ճանաչում ձեր համայնքում և ի՞նչ նպատակով եք օգտագործում • Ձեր այգիներում ի՞նչ բույսեր են աճում: • Ձեր համայնքի անտառներում ի՞նչ բույսեր գիտեք: • Ձեր համայնքում աճող բոլոր բույսերն եք օգտագործում:Ինչու՞: • Իսկ ինչն է պատճառը,որ ոչ բոլորն եք օգտագործում: • Կա՞ն համայնքում մարդիկ,ովքեր բուսակեր են: • Ինչպե՞ս եք տարբերում ուտելի և թունավոր բույսերը:

- Գիտե՞ք ձեր համայնքի թունավոր բույսերը:

Այստեղ դուրս է բերված ռեսուրսներ (գրքեր, հոդվածներ, առցանց
նյութեր, լուսանկարներ, հաղորդումներ...)
,որոնք պետք են նշված հարցերի պատասխանները գտնելու համար:
Ուշադրություն՝ պետք է դարձնել և համոզվել, որ ընտրված ռեսուրսները հավաստի են և վստահելի:

- Կարդալ նյութեր
- Դիտել տեսանյութ խոտաբույսերի օգտագործման օգտակարության մասին,կից՝ Հղում1,Հղում2

Ի՞նչ գործողություններ (զրույց, հարցազրույց, դերախաղ, փորձ) ենք իրականացնել հարցերի պատասխանները գտնելու համար:

Ուշադրություն՝ պարտադիր չէ, որ բոլոր նա,*հարցերի պատասխանները գտնելու համար անհրաժեշտ լինեն այս գործողությունները: Հարցերի պատասխանները գտնելու համար հնարավոր է պետք լինեն և՛ ռեսուրսներ և՛ գործողություններ, կամ դրանից մեկը միայն:*

1. 11-րդ դասարանի աշակերտները զրուցել են համայնքի բնակիչների հետ:
   Կից՝հարցերը
2. Խոսել են բուսաբանների հետ:

3. Ուսումնասիրել են դպրոցական դասագիրքը

Այստեղ գրված են այն աշակերտի կամ աշակերտների անունները, ովքեր պատասխանտու են տվյալ հարցի հետազոտության համար:
1.Զրուցել համայնքի բնակիչների հետ-Մարիետա,Աղավնի,Սոնա:

2.Խոսել բուսաբանների հետ-Մարի,Հայկ

Այստեղ տեղադրված են մեր հետազոտության հարցերի պատասխանները, լուսանկարների, հարցազրույցների սղագրությունները, ձայնագրությունները, տեսանյութերի, կայքերի, հոդվածների հղումներ, որոնք վերաբերվում են տվյալ հարցին:

Հարցվածներից ոմանք նշում են,որ համայնքը ունի հարուստ բուսականություն,սակայն իրենք օգտագործում են շատ քիչ քանակություն,քանի որ ոչ բոլոր բույսերն են ճանաչում:Մի մասն էլ նշում է որ օգտագործում են բույսեր,քանի որ համեղ է,ոմանք նշում են,որ օգտակար է:Հարցումներից պարզ դարձավ,որ համայնքում կան նաև բուսակերներ:
Կից հարցազրույցների հղումը՝

1Հարցազրույց

2.Հարցազրույց 2
3.Հարցազրույց 3

Բույսեր

Հոդվածի վերլուծություն՝

1.Բույսերը արժեքավոր են,սնունդ են հանդիսանում

2.Բույսերը արտադրում են թթվածին

3.Բույսերի մասնակցությամբ առաջացել և ձևավորվել է բնահողը:

Խոտաբույսերի մասին տեսանյութ

Տեսանյութի վերլուծություն՝ Խոտաբույսերը ունեն բուժիչ նշանակություն և կիրառվում են տարբեր հիվանդությունների բուժման նպատակով:Պետք է խոտաբույսերը հավաքել և չորացնել ճիշտ ժամանակին ,որպեսզի պահպանվի նրանց բուժիչ հատկությունները:

11-րդ դասարանի աշակերտները հետազոտության փուլն ավարտելուց հետո անցնում են վերլուծության և դուրս բերում լուծումը:

Վերլուծություն 1-Համայնքում կան մարդիկ ովքեր ճանաչում են և գիտեն որոշ դեղաբույսերի օգտակարության մասին:

2.Կենսաբանության նախկին ուսուցիչը կօգնի ճիշտ և ժամանակին չորացնել բույսերը,որպեսզի այն պահպանի իր բուժիչ նշանակությունը:

3.Դպրոցում կա ազատ դասասենյակ,որը կտրամադրվի դեղաբույսերի չորացման և փաթեթավորման համար:

Աշակերտները ըստ իրենց կատարած հետազոտությունների և վերլուծություններ եկան հետևյալ լուծման՝որ եթե իրենց և իրազեկված բնակիչների ներուժն օգտագործեն և իրազեկման թերթիկների, սեմինարների,հյուրասիրության միջոցով իրազեկեն համայնքի բնակիչներին,ապա շատերը կսկսեն օգտագործել համայնքում աճող դեղաբույսերը:

	Հետազոտության ընթացքը ,առաջացած խնդիրները Աշակերտները կազմակերպել են էքսկուրսիա դեպի բնության գիրկ,կատարել եմ աշխատանքի բաժանում, մի մասը կհավաքի անհրաժեշտ խոտաբույսերը,մյուս մասը դրանք կմշակի համապատասխան սենյակում: Այս աշխատանքին կներգրավվեն նաև ԿԱՊԿՈՒ աշակերտները: Աշակերտները կպատրաստեն իրազեկման թերթիկներ,որոնք կփակցնեն տուփի վրա և կենսաբանության ուսուցչի օգնությամբ կկատարվի թեյի հյուրասիրություն սեմինարից անմիջապես հետո:Այս կդառնա ավանդույթ,որը կիրականացվի տարվա մեջ մեկ անգամ: Այս նախագծի շրջանակներում աշակերտները բախվեցին նաև խոչընդոտների և կարևորեցին առաջացած ռիսկերը: 1.Աշակերտների համար խոչընդոտ էր այն,որ դպրոցի գրադարանում առկա չէին դեղաբույսերի մասին համապատասխան գրքեր,բրոշյուրներ և հոդվածներ: 2.Աշակերտներից շատերը չունեին ինտերնետ-հասանելիություն կամ համապատասխան սմարթֆոններ,համակարգիչներ: 3.Այլ աշակերտներ չէին ցանկանում ներգրավել այս աշխատանքին: 4.Անկախ 11-րդ դասարանի աշակերտների ջանքերի,շատերը էլի անտարբեր էին համայնքում աճող դեղաբույսերի բուժիչ հատկությունների նկատմամբ,նրանք

	կարծում են,որ միայն բուսաբուժությամբ չեն կարող ստանալ լիարժեք արդյունք: 5.Եղանակային անբարենպաստ պայմանները: Սակայն այս խնդիրները խոչընդոտ չհանդիսացան նախագծի իրականացման համար: Աշակերտները թիմային աշխատանքի արդյունքում ստացան գեղեցիկ և արդյունավետ պրոդուկտ: Նախագծի վերջում նրանք իրազեկվեցին և իրազեկեցին դպրոցի և համայնքի այն բնակիչներին,ովքեր հետաքրքրված էին.վարեցին սեմինար,կատարեցին խմբային քննարկում,բաժանեցին տեղեկատվական թերթիկներ և ամենավերջում կատարեցին գեղեցիկ թեյախմություն: Աշխատանքը աշակերտները կատարեցին սիրով՝նրանք այս ընթացքում զարգացրեցին սովորել սովորելու կարողունակությունը,կազմեցին թիմային աշխաըանքի կանոններ,որոնց հետևեցին ամենայն մեծ պատասխանատվությամբ: Նրանց մոտ ձևավորվեց սոցիալական դաստիարակություն դեպի բնությունը:Կարևորեցին համայնքի կողմից տրվող հարստությունը: Նախագծի գնահատման համար կազմեցի ռուբրիկ,վերջում աշակերտները իրենց գնահատեցին իմ պատրաստած ռուբրիկով:

Օգտագործված մեթոդները	Քննարկում,թիմային աշխատանք,էքսկուրսիա
Իրականացման ժամանակահատվածը	03-15.0 9.23
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Դասարանում սովորում է 11 աշակերտ,դասի կազմակերպման օրը բացակայում էր 0 աշակերտ,11մասնակիցներից 8 աղջիկ ,3տղա:

Եզրակացություններ, առաջարկություններ (1-2 էջ)

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ,	Եզրակացություն Ուսուցչի կողմից ցանկացած հետազոտություն իրականացնելիս կարևոր է ,որ աշակերտը հնարավորինս

պատասխան հետազոտական հարցին	ակտիվ ընդգրկվի այդ գործընթացում,մասնակցի բոլոր աշխատանքներին, կարողանա հետազոտության արդյունքում ստացած գիտելիքը օգտագործել առաջադիմության բարձրացման համար, կարողանա կատարել վերլուծություններ:Այս հետազոտության ընթացքում,ձևավորվում է թիմային խումբ,զարգանում են նաև համատեղ աշխատանք կատարելու,միմյանց լսելու, կարծիքները հաշվի առնելու,իրարից սովորելու, ժամանակը կառավարելու կարողությունները:Իմ կարծիքով այս հետազոտության ճիշտ պլանավորումը ,աշակերտների մոտ մոտիվացիա է առաջացնում,դեղաբույսերով ավելի շատ հետաքրքրվելու,տարբեր նյութեր ուսումնասիրելու,ինչպես նաև արդեն առօրյայում կիրառելու: Առաջարկում եմ տարվա մեջ մեկ անգամ կատարել ● խոտաբույսերի հավաքում ● մշակում ● տեղեկատվական թերթիկների բաժանում ● սեմինար-քննարկումների անցկացում ● թեյի հյուրասիրություն Եթե կա կարիք,ապա կատարել փոփոխություններ,որը դրական ազդեցություն կունենա: Հաշվի առնելով վերը նշված ռիսկերը,ունենալ այլընտրանք,խոչընդոտներից խուսափելու համար: Մաղթում եմ բոլորիս հաջող և անխափան ընթացք: Շնորհակալություն
Այլ տեղեկատվություն	Հղում

Օգտագործված գրականության ցանկ (1-2 էջ)

Օրինակ՝

1.Տ.Վ.Թանգամյան,Ս.Հ.Սիսակյան Կենսաբանություն
2.Օնլայն հանրագիտարան,հոդված դեղաբույսերի մասին
3. https://www.youtube.com/watch?v=fOc6hqAqu7o&t=39s

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր	
• Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ16 • Արդյունքներ	https://drive.google.com/file/d/1PrNxeYVpRBLw_V2aTg6vzVH8OUeuXx5I/view?usp=sharing https://drive.google.com/file/d/1weuDcVqqbGtcf69_WIC8ou6MGN4F0MKb/view?usp=sharing https://docs.google.com/document/d/1I4DbSTFP0qsG-v_TMGYPI_12uZB1S11Ka2bTKVOTGEA/edit Նկարներ